



ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՆԵՐԱՅ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔՈՐԱՊՈՐՏԱՆԻ ՏԱՐԻ ԶՄԻՌՆԵՐԱՅ ԸՆԴՈՑԵՄՔԵՐ 1873 ԹԻՒ 975

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ կառավարութեան ձեռն վերաբերեալ վիճաբանութիւններն տակաւին որոշեալ վախճան մի չընկալան : Ստորոգէ թէ թագաւորութեան վերահաստատութեան ծրագիրը այժմ թող արուեստաւ, սակայն հասարակական տակաւին կառավարութեան ձեռն-էս կատարելապէս չհաստատուեցաւ : այլ միայն Մարք-Մահոն նախագահին իշխանութիւնն տաւոր կամ եօթ տարի երկարաձգել երդուեցաւ : Նախագահն ընդունեցաւ իւր իշխանութեան մինչեւ եօթ տարի երկարելը սակայն կը պահանջէ որ իրեն յանձնուած այս գործադիր իշխանութիւնը կախումն չունենայ ի սահմանադրական օրինաց որ պիտի հաստատուին :

Ինչիւր օրագրոյն հետեւեալ յօդուածը բաւականապէս կը ցոյցանայ մեզ Գաղղիոյ գործոց անորոշ վիճակը և վէճայի պղծային երեսփոխանական ժողովոյն աշակերտման կուսակցութեան նպատակը :

Տակաւին կը վիճաբանին, կը թէ ինչիւր, կառավարութեան պայմանաց վերայ, տակաւին սահմանադրական աղատութեանց և երաշխաւորութեանց խնդիրն կը յուզի և կը զբաղի տեղութեան և ընդարձակութեան վրայ : իւր թէ պահանջուին ունենային կանոնաւոր և տեղական կառավարութիւն մը կազմել, բաւական են մինչեւ ցայսօր եղած խորհրդարանական վիճաբանութիւնքն, և ժամանակն հասած է որ շուտով դիմեմք պարզ միջոցներու : Գուցէ երեսփոխանական ժողովոյն մեծամասնութիւնը փոխուի վաղը : վերապահենք զայս և զերկայն միայն ապահովենք ինչ որ տա :

Նինք : Ուրեմն թող Մարք-Մահոն մարաշախոր օրուան մի համար դիկտադոր վնի լաւագոյն վաղուեան մի յուսով : Այժմ մեք կարողութիւն ունինք ոտնիկանութեան (բօլիս) կառավարութեան մի որ հաստատուն պահէ զբարեկարգութիւնն և արդիւն զգողութիւնն և զմարդասպանութիւնն : Ահա այսպիսի կառավարութիւն մի պէտք է և կը յարմարի Գաղղիոյ նման երկրի մը ուր ամենուն հարստութիւնը և կեանքը անմիջական վտանգի մէջ կը գտնուին : և այսպիսի կառավարութեան միայն արժանի եմք : Քանզի թագաւոր մի ունենալ չուզեցինք : ուստի պէտք է որ ոտնիկանութեան գործակալ մի ունենամք զմեզ կառավարելու համար :

Պայմանիոյ համադրոյն ձախորդ պատերազմը կը շարունակուի : Այս դժբաղդ տեսութիւնը ներքին խռովութենէ ի դատ արտաքին փորձանք մի ևս ունեցաւ, որ ծանր վտանգի մէջ կը դնէ զԲուլղարիոյ Սփանիոյ կը վերաբերի, և որուն վերայ ի վաղուց աչք ունի Ամերիկայի Միացեալ Նահանգաց մեծագոր հասարակապետութիւնը : Ամերիկայի ժողովապետակց Բուլղարի իշխանութեան կողմէն բռնուելով, կարծաւ դատաստանէ մը ետեւ դիտաւորեցան յիշեալ կողմէն մէջ : Այս եղբորութիւնքն ի հանուր սրամտութիւն պատճառեց Միացեալ Նահանգաց ժողովրդոց վերայ, որք անմիջական վրէժխնդրութիւն կը պահանջէ : Կրէնթ նախագահը պարտաւորեցաւ քանի մը պատերազմական նաւեր յուղարկել ի Բուլղարի : որուն տիրելու դիտաւորութիւններ կը տեսնուին թէ պէտեւ Մատրիտի կառավարութիւնը խոտադարձէ ամեն կերպ հատուցումն տալ և դո՛ւ ընել :

ՀՀանդարտապետութիւնն Ամերիկայի, այսու ամենայնիւ տակաւին այս ձախորդ խնդիրը կարգի չգրուեցաւ :

Լոնտոնի թայմ օրագրիւր իւր թուոյն մէջ որ ի 8—20 Նոյեմբերի, յօդուած մի կը հրատարակէ, որով իրաւունք կու տայ Ամերիկայի կառավարութեան, որ փութացաւ քանի մը նաւահանգիստներ գրաւել ի Բուլղարիոյ կողմէն : նմանապէս կը յուշեցնէ թէ Ամերիկայի Միացեալ Նահանգներն իրաւունք ունին յիշեալ կողմէն մէջ հասարակապետական անկախութիւն հրատարակել, ի դիպուածի որ Սփանիոյ կառավարութիւնն չփութայ կատարեալ հատուցում մի տալու վասն զխառնման ծովապատակաց :

Խառնական բարդմէնքը ամսոյս 4—16ին բացուեցաւ պատուական գահախօսութեամբ մի որուն մէջ յատուկ նշանակութեան արժանի է այն խօսքը որ կը թէ իտալիոյ և Գերմանիոյ քաղաքական օգուտներն նոյնական են, այսինքն ինչ որ Գերմանիոյ օգուտն է, իտալիոյ ևս օգուտն է : Բաց յայտմանէ յիշեալ գահախօսութեան մէջ երկար բացատրութիւններ տրուած են տէրութեան նոր կարգաւորութեանց Պապին անկախութեան և ուրիշ բազմաթիւ գործոց վրայ : որոնք վառահոլութիւն կը մատուցանեն տեղական խաղաղութեան համար, ինչպէս նաեւ իտալիոյ նիւթական բարօրութեան նկատմամբ :

Եւրոպիոյ դրամական տագնապալից կացութիւնը բարեբաղդաբար, բարւոքելու վերայ է : Գաղղիոյ պանքան իւր դրամագեղջը հարկերն 6ի իջեցոյց, և Անգլիոյ պանքան 8ի :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

Ի ԵՆՈՒՆԻ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ԵՄՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

- Ես Գառնիկ հեզ մոլոր հօտիս ճարակի ի դաշտի :
- Ո՞ր դիս եղիտ, յուս իւր երարծ, էած յերկիր հայրենի :
- Այն ինչ նստեալ հառաչէի ի մթութեան գիշերի :
- Ո՞ր դիս եհան ի խաւարէ ի լոյս կենաց պանծալի :
- Երբ մերկացայ զլուսնիցն զիմ պատմական հարսանեաց :
- Ո՞ր դիս նորոգ պատմական շնորհաց Հոգւոյն զարդարեաց :
- Այն ինչ գրաւեալ ընդ տէրութեամբ անագորոյն բանաբերութիւն :
- Ո՞ր դիս զերծոյց ի մահաբեր ժանեաց գոռոց զազանի :
- Մինչ ես լքի զերկնից կայեան ընդ երկրապլշ անասուն :
- Ո՞ր դիս ժառանգ արքայութեան արար փառաց գերարուն :
- Ո՞ր փոխարկեաց զիմ արջնաթոյր զհանդերձս մեղաց մոլութեան :
- Ի ձեռնաթոյր երանգ բարեաց ամբիժ գեղով ժանկութեան :
- Վա՛հ կորցեցին յիմոց մատանց զիմ շողջողուն անասնին :
- Մինչ ես ի լոյս ո՞ր դիս զիմոց պարծոյց ատիս վերստին :
- Ո՞ր խորտակեաց զիշխանութիւն հարստարարն բանութեան :
- Որ պարարեալ նախածնողացս յիմ պարանոց ծանրացան :
- Եւ ո՞ր պղծ որ, բայց թէ միայն մանուկ մի մերկ հոլանի :
- Որ յայտ աւուր ծնաւ յայրին ի Բեթղէմ քաղաքի :
- Սա միտին որդին անճառ Հօր հակից ծոցածին :
- Որ ստաջի երկինք, երկիր ահիս դողան, սասանին :
- Որ կամու Հօր և սուրբ Հոգւոյն ի յանձն էա զմարդկութիւն :
- Ա. ի փրկի զմեզ ի մեղաց եղև մանուկ կաթնասուն :
- Հոյք հրեշտակացն զբարայրին անհատ շարժան զերբան :
- Մանկացեալ կենարարն զերգս յորինն արարան :
- Կեսր ի նոցունց ուրախակից և զեալ բնութեան մարդկային :
- Ճախրն ընդ օդ տան զաւուր, տօնեն զծնունդ միածնին :
- Այլ ի Զաւարթնոյ երկնաբնակաց զԱ. տաճարն արարն :
- Ճախտ կուսին լուսածաճանչ ի հոյս վարդից պապին :
- Հապա և դուք ազգ և աղինք եկայք տօնել զՓրկչին :
- Ծնունդ չքնաղ, որով ծնաք ի ծնունդ նորոգ վերստին :

Եկայք և դուք Հայք համարինք, դուք օրհնեցէք միշտ զԱստուած, Որ վասն մեր, բա՛րէ սիրոյն, զիւր ծոցածինն առաքեաց :
Այսուհետեւ զի՛ յասպաղիմք, եկայք պաշտել զՓրկչին,
Եւ ձայնակցեալ երգոց հովուացն օրհնարանել զԱրարչին :
Օ՛ն փութացո՛ւք դուք զուգակիցք իմ հարազատք սիրաւուն,
Շնորհաւորել զծնունդ Փրկչիս՝ բարեբարիս մեր արթուն :

Ի Եռլի, 15 Յուլիս 1873

Աշակերտ չորրորդ դասարանի
ազգային հոգևոր դպրոցին Հայոց Ղարաբաղու,
Համբարձում Մախմարեանց :

Բալբառ, Մոնղոլայ սրբոյ Սմբատայ Բագրատունց ի փախստեան սեւորդեաց ի պատերազմին որ ի Նիզ գաւառի :

- Մեր թշնամոյն չորայ ահա, վտանգք կենաց ինձ միան,
- Եւ դուք փախչեք, ո՛վ տիրանկեզք, թողուք աստէն զիս միայն :
- Այլ քու յինէն փախուստ, թաքուստ անուն կրել անարի,
- Ես միմիայն կայից ընդդէմ գոռ գաղանաց ամենի :
- Ճգամք իմով գէթ փրկեցիք իմ Հայաստան ցանկալի,
- Իսկ եթէ ո՛չ, մեռայց աստէն ի սէր նորին տենչալի :
- Ես թախեցից զանպարտ արեւս ի սէր իմոց Հայրենեաց,
- Այս են պարտիք զօրականին և այս օրէն Հայկազանց :
- Ահ տիրադրժժք զիս արդ մատնէք ի ձեռս անգութ զազանայ,
- Այլ քա՛ւ յինէն դո՛ւ դատալիք եղից ես զճճ հոյրենեաց :
- Ընկալ զարին իմ Հայաստան ի հօտ անոյշ և չքեղ,
- Ի կարգ քաջաց քոց դիւցադանց յիշեա՛ զքոյգ և Մուշեղ :
- Այլ ձեր անուն նզովեցիք դարուց ի դարս ի յաղկին,
- Կացցէ մտաց և յիշատակ ձեր վատութեան զլիսովին :
- Եւ մի լիցի ձեզ ակեռակն թէ ողջանդամ ապրեսցիք,
- Այլ վաղ ընդ փոյթ ի թշնամեաց դիպաւալ լինիջիք :
- Ի հատուցումն արդարադատ, զոր ձեռք Երկնից կնքեցին,
- Զի որ մատնէ զհայրենիս, մատնի և ինքն զլիսովին :

Ի Եռլի, 11 Օգոստոսի 1873 :

Աշակերտ երրորդ դասարանի
ազգային դպրոցին Հայոց Ղարաբաղու,
Յակովք Օնանեանց :

ԱՋԳԱՅԻՆ

Հետեւեալ նամակը աղգասէր աղնիւ բարեկամէ մի ընկալաք, զոր յօժարամիտ կըհրատարակեմք ըստ խնդրոյ նամակագրին :

Իզմիր, 12 Նոյեմբեր 1873 :

Արդոյ հրատարակիչ Արշալուստյ :

Պատուական լրագրող Հոկտ. 20 թուոյն մէջ քաղաքիս Հայ ընթերցատան նկատմամբ հրատարակեալ յօդուածոյն առաջարկութիւններն արդարեւ պատիւ կընեն նամակագրին : Եւ իրօք յիշեալ հաստատութեան թանգարանին մէջ գտնուած գիրքերը՝ ըստ մեծի մասին անդգիրէն և դադողարէն ըլլալով, հայերէն գիրքերու պէտքը կըզգայ ամեն ոք . և շիտակը զրուցելով Հայ ընթերցատուն միառանց հայերէն գիրքերու չկրնար ըլլալ :

Իսկ բնագիտութեան տեղեակ անձի մը՝ գործիքներով դասախօսութիւն ընելու մասին, շատ զոհ պիտի ըլլայինք եթէ այս ևս տեղի ունենար, մանաւանդ եթէ հայերէն լեզուով դասախօսութիւն ըլլար . որով եւրոպական լեզու հասկնող աղգայինք ևս կարենային մասնակցել և օգուտ քաղել : Ըստ մեր կարծեաց բնագիտութեան զատ աղգային պատմութեան և հին և նոր ազգաց վրայ, ինչպէս նաեւ բնական, քաղաքական և ուսումնական աշխարհագրութեան վրայ բանախօսութիւններ կամ դասախօսութիւններ ևս շատ օգտակար և զուարճալի կրնան ըլլալ մեր ազգայնոց համար :

Իգական սեռին որոշեալ օր մը ընթերցատուն յաճախելու և ատենախօսութեան մասնակցելու առաջարկութիւններն ևս շատ դուրեկ կըգտնեմք, եւթարդելով և յուսալով մանաւանդ որ Հայ տիկնայց և օրիորդայ թեւադրութեամբ զրաժ ըլլալ նամակագիր(1) : Արդարեւ ինչ գեղեցիկ աղգեցութիւն պիտի ընէ անոնց վրայ, եթէ ձեռն գիշերները շաբաթը կամ տասնեակինգ օրն անգամ մի արդոյ պարոնայք Մամուրեան և տօթիոր Արախոսեան բարեհաճին բանախօսել կանանց դաստիարակութեան, կամ կանանց՝ մարդկային ընկերութեան մէջ ունեցած բարձր դրութեան և կամ որ և է այլ օգտակար նիւթի վրայ . և այս՝ սարգ աշխարհաբար և դիւրիմանալի լինելով :

Խնդրելով, արդոյ խմբագիր, որ այս տողերը ձեր լրագրոյն էջերուն մէջ հրատարակելու շնորհք ընէք, մնամ, ևայլն :

Յարգոյ խմբագիր Արշալուստյ,

Իզմիր, 10 Նոյեմբեր 1873

Արշալուստյ, հաճեցէք սոյն նամակս ձեր օրագրին մէջ հրատարակելու, որու համար կարի շնորհակալութիւն պիտի մնամ ձեզ :

Այս շաբաթ Պօլոյ Մեդու շաբաթաթերթին մէջ իզմիրէն զրկուած թշնամական յօդուած մը կարդայինք մեզի գէտ. ուր ընթերցողը փոխանակ հրապարակական թերթի մէջ օգտակար իրողութիւն, հասուն քննադատութիւն, լուսաւոր կարծիք և օրինաւոր գիտողութիւն նկատելու՝ արհամարհանք, թշնամական ոգի, բուռն կիրք և շարակամութիւն կընշմարէ յայտնապէս : Երեւելի գրագէտի մը ըսածին պէս՝ պարոն պարտաւարը իւր թշնամական ոգին յազգեցնելու համար իւր փաստերը տրոհմանու և ցնցելու մէջէն ժողովել խոնարհէր, և իւր թունաւոր գրիչը՝ չգիտեմ ինչ ոգով, իւր խոստովանածին պէս քսան տարի անընդհատ աղգային մանկուոյն համար տքնող պաշտօնէի մը գէտ՝ լի կրիւք և թշնամանք կըգործածէ, պաշտօնէի մը՝ որու զուգէ, եթէ չեմ սխալի ինքն ալ աշակերտելով իւր գրիչը սոսոր անոր գէտ՝ սրելու ապրանքութիւնը կըզործէ և անոր անձնականը վերադարձու փորձեր կընէ և Թողլովսյմ գոյս, լուսարաններ խնդրէր : Մեր իզմիրի Հայ ընթերցատունը՝ որու յառաջադիմութեան փափաքողներէ մին ալ մենք ենք, ձեռն գիշերներ կրքեմն սովորութիւն եղած է բանասիր և դաստիարակութիւններ ըլլալու : Ինչպէս ուրիշ տարի ի խնդրոյ ոմանց բարեկամաց և մեր Արշալուստյ աման նկարողը պատրաստելով ընտիր առաջատուութիւն ունեցող երկրասարգի մը կարդայինք տունք, այս տարի ալ թէ՛ Հայ ընթերցատան վարչութեան և թէ՛ բարեկամաց ոմանց կողմէն՝ հրապարակեցանք որ գիշեր մըն ալ մեր ատենախօսներ : Ատենախօս և ատենախօսութեան յատկութիւնները լուսաւոր ըլլալու համար՝ անկարելի եղաւ մեզ համոզել զանոնք որ բանաւոր ատենախօսները մեր համարձակութենէն վեր է . բայց չուզելով միանգամայն բողբոլին մերժել անոնց խնդրը, եթէ ոչ բանասիր գիտնէ գրաւոր ատենախօս

որութիւն մը կարգաւոր յօժարամտեցանք : Պատրաստութիւնը զայն՝ դժբաղդարար մեր անձնական տկարութեան պիտեմանալ (որով Պ. պարտաւարը չուզէր հաւատալ, չգիտեմ ինչ ոգով և այլապէս մեկնութիւններ կուտայ անոր) չկրնալով նոյն գիշեր ընթերցատուն երթալ՝ մեկուկ վատահայեանք մեր շարադրածը որ բեմին վրայ կարգայ : Ատենախօսութեան հետ ուրիշ գիր մըն ալ ուղղեցինք առ ընթերցատան վարչութիւնն, յորում մեր չգալուն բանաւոր պատճառը ծանուցանելով՝ խնդրեցինք նաեւ որ ատենախօսութիւնը կարդայուած ատեն՝ մէկը չընդհատէ զայն . և եթէ մէկը կարծիք կամ գիտողութիւն ունի՝ վերջը յայտնէ . վասնզի ասպարէզը ամենու համար բաց է ըսած էր : Մենք ջանացեր էինք կարելի եղածին չափ մեր ատենախօսութեան լեզուն և իմաստը նոր ընթերցասիրութեան ճաշակը առնող անձանց հոգիի և գիտելութեան ընելու, առանց երեւակայելու որ հոն մեր Պ. պարտաւարը պէս երեւելի հանձնար եւ անհման գրիչ կայ, որու բարձր գիտութեան և բանադատութեան պիտի եւթարդի մեր գրութիւնը և այսչափ արհամարանք պիտի կրէ :

Պ. Մ. նամակագիր, այն գիշերը ասպարէզը բաց էր քեզի համար ալ : Ինչո՞ւ չուզէր և քու նոյնք հանձնարդ և գիտողութիւններդ չհոսեցիր հոն . կերեալ թէ նոյն ասպարէզը քեզի համար անձուկ համարելով՝ քու տաղանդը և գրիչդ՝ հրապարակական թերթի մէջ աւելի ցոյցնելու ուղեցիր ի՞նչ աշխարհի . ապրի՛ս, նախատակից հասարկինչ է երեւ քու այս հանձնարդ . ո՞չ այլ ինչ, բայց միայն արհամարհանք և նախատինք տեղալ այնպիսի անձի մը գէտ՝ որու խնամոյց իրօք ըսածիդ պէս աղզը, շնորհ ունիմ մեծապէս, քսան տարիէ աւելի իւր երկու սեռի զաւակները վատահայեանք է և զոր այսօր դու անխղճաբար վատահայեանք կըլին : Չարմանալի՛ բան . քսան տարիէ ի վեր ո՞ւր էիր, բարեկամ, այսօր միայն աշխարհ վրայի գերանը վար առնելով կըքննադատես զնա : Բայց գիտեմ, յայնպէս քու չէ . զքեզ թունաւորող և թեւադրող բերան կայ . անշուշտ օր մը և զուգէ մօտերս այն ողորմելի էակին գաղանի վարագոյրը վար պիտի առնուի և զինքը յայտնապէս անոր ետեւ պիտի տեսնենք : Բարեկամ, Չաբերանը երբէք կհանքին մէջ մեծաբանած չէ, և ո՞չ զինքը հեղինակի, բանաստեղծի, դրագէտի և քաջ դասաւորի տեղ գրած . ինքը այո՛, քսան տարիէ ի վեր աղգային կրկին սեռի հայկաբանութեան դասատու է թէ՛ Հայ և թէ՛ օտար վարժարաններու մէջ . ըսէ՛ յայտնապէս ցարդ անոր դասատուութեան պաշտօնին հմուտեան, եղանակին, ընթացքին, վարմունքին և բարոյականութեան մէջ ինչ թերութիւն տեսար . զայն ըսէ և սիրով կընդունի և շնորհակալ կըլլայ քեզ :

Պարոն Ս. բարեբաղդաբար նոյն գիշեր ընթերցատուն չեմ գտնուեր . վասնզի այնպիսի հակառակորդ մի ունեմ եղեր, որ ամեն արհամարհանք և կիրք վրաս թափելով՝ ընթերցատունը վեր ի վայր պիտի յուզէր, և . . . : Սիրելի, ինչպէս յաճախ ըսած եմ և նոյնը կըկրկնեմ. նոյն օրինակ կիրքով պիտի չներկայինք ընթերցատուն . այն տեղը հասարակաց կրթարան է, հոն կիրք, արհամարհանք, աւելութիւն տեղի պիտի չունենայ . ինչո՞ւ ընթերցատուն մէջ ատենախօսող չպտուիր, և ինչո՞ւ վրձարանութեան գիշեր ամեն մարդ համարձակութիւն չունի և բերանը կարկած կընստի . վասնզի քեզի պէս արհամարհանող ոգիներ, հեղինակ լեզուներ, մեծաբանող բերաններ և կըրոտ սրտեր պակաս չեն . հոն չկայ եղբայրութիւն, անկեղծութիւն և վստահութիւն, որ ամեն երկրասարգ ելլէ կարծիք յայտնէ, որ կարեւոր ճշմարտութիւններ կրեան ելլելով՝ օգտալար դաս մը ըլլայ հոն եռանդով յաճախողներու : Մեզմէ յառաջ բերմասաց մը Սահմանադրութեան վրայ խօսելու ատեն՝ երբ ըսած էր թէ Սահմանադրութիւնը և ապա լուսատու ունիք, նոյն գիշեր մտադրեցինք՝ որ ասոր վրայ քանի մը խօսք ալ մենք կցենք մեր բանախօսութեան մէջ : Գրեցինք արդի Սահմանադրութեան նկատմամբ քանի մը խօսք յարած ատենին՝ ըսած էինք թէ լուսատուութիւնը որ լուսու կատարելապէս սահմանադրութիւնը՝ և ինչպէս ուրիշ անոթի մէջ զայս լուսաբանեցինք և մեծա . տօթի՛նք Կիւրակոսեանի հետ համալու գտնուեցանք, այս էր միտքս թէ՛ պէտք է որ ամեն անհատ Սահմանադրութեան դաստիարակութիւնը լուսաւորուի որ կարող ըլլան անոր ոգին ու տրամադրութիւնները լուսաւորուի և իմանալ : Պ. պարտաւարը, կերեալ թէ բուռն կրկնէ մէջ այնչափ յուզուած էիր որ ի վերջէ զգայարաններդ թմրելով գոցէ այն ըսածը Նիւհողը՝ դու պիտի լինիս, որով չես կրցիր խօսքերուս ոյժն ու հոգին լուսու ուղեւորաբար ըմբռնել . ինչո՞ւ դու ալ մեծա . տօթի՛նք Կիւրակոսեանի օրինակին չհասկեցար, որ ատենախօսութեան վերջը իւր

կարծիքն ու գիտողութիւնը ազատ յայտնելի է հոն . դու նոյն ատեն ո՞ր անկիւնը քաշուած պահուած էիր որ չես ևս, և զոչու մը հրապարակային թերթի մէջ բարձրացուցիր և զայն՝ լի կրիւք և թշնամանք : Պարոն, եթէ մեր բանախօսութիւնը քու տաղանդիդ և բարձր իմաստութեանդ առջեւ արժէք չունեցաւ, կըհրաւիրեմ գրեզ գիշեր մըն ալ հոն ատենախօսելու, որ քու ընտիր ատենախօսութիւնդ օգտակար դաս լինի մեզ : Եթէ ճշմարտութեան աշակերտելով քու գիտողութիւններդ օրինաւորապէս, անկեղծօրէն և առանց կրկն յայտնած ըլլելի սիրով պիտի ընդունի զանոնք և պիտի գովի իսկ ըզքեզ . բայց որովհետեւ կրկնէ մէջ ինքզինքդ մոռնալով և նախատակից բողբոլին չեղելով՝ անձնական միայն վերադարձու համար քու գրիչդ անխորհրդաբար շարժելու ճիգն թափեալ . (անշուշտ սեւաղգնատ սատանայի մի գրեմամբ) . թէ և հարկ էր այնպիսի գրութեան մը արհամարհական լուսնութիւն պահել, այլ պատուստրը զգացուած շարժեց գիտ սոյները խօսելու և զայս առաջին և վերջին համարելով, և եթէ այդչափ արհամարհական խօսքերովդ չես շատանար, շարունակէ՛ միտքդ՝ Մեդուին էջերը եթէ բան չունիս . Չաբերանը խօսքերովդ չվճարիր և չստեմանար : Գիտեմ, հասարակաց ատենին առջեւ ընտիր շահատակ մի հանդիսացար և յայտնեցիր ինչ բարոյական և ինչ ոգի ունենալդ : Զքեզ թեւադրող միայն իրօք ծախ պիտի գտնէ քեզ և զինքը վրայ փառաւոր պսակ պիտի բողբոլէ : Երեւելի բարոյագէտ մը կըսէ «Եթէ մէկը թեւախօսութեամբ կըխօսի քեզի՝ ուշադրութիւն մի ընէր . եթէ յիմարութեամբ կըխօսի, ցաւ՝ անոր վրայ, եթէ քեզ նախատեսու մտքը կըխօսի, ներք՝ անոր» : Յաւեցայ քու վրայ յիմարտաբար խօսելով համար, և կընենմ նաեւ քանի որ խօսքիդ նախատական եւ խրատ ըլլայ քեզ նախատինք չտեղալու իշխ վրայ, գիտողաբար գրչի և աղնիւ ողբոյ զարմ չէ այդ . խօսէ՛, այլ ոչ թեւախօսաբար, ոչ յիմարաբար և ոչ նախատաբար :

Ս. Զ.

Միշտ հոգեւոր մեք ամապարոյն մէջ յօդուած մի կըկարդամք ընդ վերնագրով՝ «Հեւրեմն քննադատութեան եկեղեցական պատմութեան հ. Մ. Վ. Մուրաւեանցի» : Բայց այս յօդուածոյն գրեթէ կէսը քննադատութեան հերքման չլինարեւիր, այլ անձնական ատելութեան աղգիւնք է . զոր յօդուածագիրը կուզէ նախ քննադատ սարկաւազին և երկրորդ Աշխարհայ խմբագրին, որ նոյն քննադատութիւնը հայկերէն քաղելով իւր թերթին մէջ հրատարակեց և նորա հիմնաւոր կամանհիմն լինելոյն որոշուած մը յանձնեց ամենայն Հայոց մեր վեհա . կաթողիկոսին և Ս. Սինօգին : Զայս ընելուն համար Աշխարհայ շարաշար դատաւարութեամբ է Միշտ ամապարոյն, նմանապէս յայնչաւոր համարուած է վանքի մը կաթողիկոսը զրուցած եմք, իբր թէ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյն Քահանայապետը մերը համարուէր, կամ իբր թէ Աշխարհայ Հայոց աղգին մէկ անգամը չլինէր :

Այս ամեն բժականութիւններն ուրիշ բան չեն նշանակեր, բայց միայն Միշտ ամապարոյն մասնաւոր ատելութիւնը որ ունի Հայաստանեայց Մայր Ս. Աթոռոյն և անոր վեհա . գահակալին վերայ . իսկ յօդուածագիրոյն զրուցածը թէ Աշխարհայ խմբագիրը մասնաւոր ատելութիւն ունի արժա . Մ. Վ. Մուրաւեանցի վերայ, բողբոլին անտեղի և անհիմն է . և առ ի ասպարէսանել կըխոստանամք զվերոյիշեալ հերքումն հրատարակել մեր թերթին մէջ՝ ի բաց առեալ անտեղի և լի կրիւք գրեւածները որք դատաքննութեան հերքմանը հետ ամենեւին յարաբերութիւն չունին և ոչ իսկ Աւետարանի ճշմարիտ աշակերտի մը կրկնելէ :

Աւայժմ հարկ կըհամարուի հրատարակել քեզ պատուէն առ մեզ յուղարկեալ խոհական նամակ մի, որ արժա . Մուրաւեան Մեքիսեղ վարդապետին՝ Խաչիկ մեքոյու մեղի դէմքած վերջին ձախորդ . յարձակմանը վրայօք խորհրդեւածութիւններ կըպարունակէ, զորս մեր ոչ չափիտ ընթերցողաց անաչառ ուշադրութեանը կըյանձնեմք :

Ահաւասիկ յիշեալ նամակը :

Պատկեր, 28 Նոյեմբեր 1873

Յարգոյ խմբագիր Արշալուստյ,

Մասիսի Հոկտ. 2 թիւին մէջ Մեքիսեղ Մուրաւեան վարդապետի մէկ պատասխանը կարդացի ձեր հե-

(1) Երանի՛ քե հիմնաւոր լինէր այս յոյսը : Ծ. Խ.

բառարարութեան դէմ, զոր բրած էր Բենեդիկտոս 11-ին Եկեղեցական պատմութեան՝ յօդուածը Հայկե-
նիք լրագրէն փոխառելով ինչպէս սովորութիւն է ան-
նայն ազգի լրագրաց ընդէ: Եւ յիշելով ինչպէս որ յայտնի
է, զորտ կրօնական է, Հայկական սուրբ Եկեղեցւոյ
դատարանութեան վերաբերեալ, ուստի իրաւամբ
պատասխանած էր ձեր Արշալուսի միջոցաւ, Էջմիա-
ծնայ Ս. Սինոդի յանձնելով խնդիրը:

Եւ՝ Սինոդի վարդապետը՝ ի մօտոյ չեմ ճանաչեր և
ոչ ալ իր հեղինակած Եկեղեցական պատմութեան մա-
տենը աչքէ անցուցած եմ. իր վրայօք միայն բարի
համբաւ և գովութիւն է հերոստ խմացած էր Երուսա-
ղէմէ դարձ անո՞ղ ուխտաւորներէ, որոց կարճ և հա-
րանցի անսովորեալ շատ անգամ կրնայ խաբուի-
բայց ինչպէս ասուել կրնայ, Սինոդի նամակէ իւրով
ճանաչի, իր պատասխանը կարգաւ իմացայ ինչ ոգ-
ւոյ տէր ըլլալը: Իր տուած պատասխանովը բուն խըն-
դիրէն ճարպկութեամբ փոխուած տու ուղեւոր, կա-
ռաւականի փոխած է, որպէսզի խնդիրը կեանքով օ-
ձիրը ձեռքէ ազատէ: Եւ հետաքրքրութիւնովս մէկ օ-
րինակ ձեռք ձգեցի. նոյն Եկեղեցական պատմութեան,
և թէպէտ քննադատութեան մասին՝ մանաւանդ իր քո-
նականին տկարութիւնն կրնաւ տեսնուիլ, սակայն կար-
գաւոր այդ գիրքը ուրիշ բան չանայ հոն, եթէ ոչ չոր
ու ցամաք հետեւութիւն մը զուտ պատմական և կերե-
նայ որ, ինչպէս կաթողիկոսաց վարուց և յաջորդու-
թեան պատմական մասը ցամաք՝ ոճով մը ազգային
պատմութեան, և հեղինակաց ու անոնց կրկնաւորու-
թիւններուն վրայ տուած տեղեկութիւնն Պատմութիւն
ազգային դպրութեան գրքէն, նոյնպէս դաւանաբանա-
կան մասն ալ գերմանական կամ որ նոյն է բողոքական
քրիստոնէականներէ քաղած է. և ան՝ թերեւս միամտա-
բար և ոչ զազանի նպատակաւ մի, թէպէտ յունական
և լատինական եկեղեցիաց դէմ ունեցած հակակրօնութիւ-
նը միշտ լուեկայն՝ ցոյց տուած է: Թողունք այլոց կա-
րողադուինց մանաւանդ Մայր Սինոդն Ս. Սինոդի,
որ մենք լաւ և ի մօտոյ կը ճանչնայ. զՄուրատեանը,
քննութեան ենթարկել անոր հեղինակութիւնները.
մենք ինչ որ մէկ կը պահանջէ՝ կառաւական խնդրին
վրայ խօսինք. ինչո՞ր լճ՝ որ տեղեկութեանս եղած է,
ու քանիցս անգամ խօսեցած և հրատարակած եմք
պատմական լրագրի միջոցաւ:

Սինոդի վարդապետը կերեի որ Ե-
րուսաղէմայ միաբնութեան մէջ միայն ուսուցչապե-
տութեան պաշտօնի և ուսումնական իրողութեանց պա-
րագած ըլլալով, իմաց չունի երբեք Ս. Սինոդն նի-
թականի և տեսականականի վերաբերեալ խնդիրներէն և
անօրէնութիւններէն, և կամ ընթերցած չէ, կամ իր
տեսութեանէն վրիպած է անց կացած իրողութեանց ար-
ձանագրեալ տօմարը՝ որոյ մէջ պիտի կարդար անշուշտ
Ս. Սինոդի՝ Գահիրէի և Աղեքսանդրիայի մէջ ունեցած
կառաւակներուն վերջնական կերպով լրացած ըլլալը և
սրբազան Պատրիարքին հաւանութեան գրոյն պատճէ-
նը. հետեւաբար տարապարտ կարծիք կը յայտնէ կամ
կըստէ ըսելով թէ՝ «ի պատիւ ազգային վարչութեան
ազգաբարութեանը և Դուպար փառայի խոստման միայն
առկա մնացած է»: Ս. Սինոդն ըսինք, կարծիք մի
է իրեն միայն օտարական. բայց ընդհանր ամենա. Եւսայի
Ս. Պատրիարքին և իր միաբնութեան կամքին, ամ-
բատանութիւն մըն է Կ. Պօլսոյ ազգային վարչութեան
դէմ, որոյ խաթմը համար Ս. Սինոդը եւ թողուցած
կըլլայ իր անհնաւորութիւն մէկ խնդիրը, որ իւր նիւթա-
կան շահուն կը վերաբերի. և տուով նոյն իսկ Ս. Սինոդը
պատասխանատու կրնէ ընդհանուր ազգին և ազգայն
սերունդին առջև: Ս. Սինոդն Սուրբատեան վարդապետի
պարզամտութեան մէկ յայտնի ապացոյցը եղած պիտի
ըլլայ: Սինոդի իրեն անգամ Գահիրէի Հայ հասարակու-
թեան և իւրեւ տկարութեան վրայ եղեալ իրողութիւնն-
բուն և վերջին որոշմունքներուն, կր յայտարարեմք ա-
ռաւի ընդհանուր ազգիս, որ Գահիրէի մէջ ունեցած Ս.
Սինոդին կառաւակները երեք տարիէ հետէ յանձնուած
են Ս. Սինոդին. որոյ կողմանէ եկած էր, այն ժամանակ
Սուրբ Նշանաւոր վարդապետը, որուն անկարգ ըն-
թացից պատճառով եղած խռովութիւնները և կրկուս-
տեք փնտնելն ալ յայտնի են հասարակութեան: Գա-
հիրէի կառաւակները, ինչպէս ըսի, զատապարտեալ Ս. Ս-
նոդ վարդապետէ յետոյ Գէորգ անուն ճապարի յանձ-
նուած են, որ դեռ մինչև յայտարարեալ կը իւր
պաշտօնը ի մեծ շահ է. և Գաղով Ս. Սինոդի իրող-
ութեանց, այս ալ վերջացած է համաձայնութեամբ տեղ-
ւոյն ազգային հոգաբարձութեան և սուրբ Սինոդին, ո-
րոյ կողմանէ եկած էին յայտնաւոր լուսնադի իգնաւորու-
ն և Սինոդի եպիսկոպոսք. յորոյ թիւէ մին վախճանած է,
միւսը դեռ կենդանի է, և կրնայ վրայել: Իսկ եթէ ինքն

ուրանայ, հոս իւր պատմական տարապարտութիւնը կեն-
դանի է արձանագրութեան և սոյն գործի վերաբերեալ
թղթերուն մէջ. թղթեր՝ որ տեղական կառաւարու-
թեան օրինաց համեմատ գրուած և վաւերացած են:
Ուստի կը մնայ արդ Ս. Սինոդին և Ս. Պատրիարքին որ
մէկը իրենց կողմէն խնդրէ հոն և կառաւարութեան ա-
տենին դիմաց փոխանորդաբար իրենց հաւանութիւնն
յայտնեն ըստ արձանագրութեան, և տէր ըլլան նոյն
անշարժ ստացուածոց: Ս. Սինոդն և Երուսաղէմէ Ս.
Երուսաղէմէ ունեցած կառաւարոց խնդրին վերջնական
որոշումը, որ անփոփոխ է և անփոփոխ պիտի մնայ դա-
րուց ի դարձ ընդդէմ որ և է անկալութեանց...:
Իսկ ի մասին վեհ. Դուպար փառային խոստման, չեմ
վարանիր զրուցելու թէ Սինոդի վարդապետը երազ
կրտեսնէ. քանզի այն կարծեցեալ խոստումն այնչափ
անհիմն է, որ չափ անհիմն և ճշմարտութեան հետեւ
իւր միւս գրուածներն ի մասին յիշեալ կառաւական
վերջացեալ խնդրոյն:

Եւ խնդրելով, յորոց խմբագիր, արձագանգ ըլլալ ներ-
կայ դատողութեանցս Արշալուսի միջոցաւ, մնամ, և
այն:

ՊԱՐՏԻՐ

Կ. Պօլսոյ ազգային ցաւալի գործոց վրայօք
Մաթիէն Նոյեմբերի 6 թուոյն մէջ հետեւեալ տե-
ղեկութիւններն կը կարգաւոր, որ կերպիւ իւրի-
մի իմարական են, ըստորում Բ. Դուպար մար-
դապետարար հարկ համարեցաւ միջամուխ վի-
նել, վախճան մի տալու համար ազգային խռո-
վայոյզ կացութեանը:

Ահաւասիկ յիշեալ տեղեկութիւններն:
Երեկ չորս գերաւ եպիսկոպոսներ և տաանե
չորս աստիճանաւոր ազգային Բ. Դուպար հրա-
ւիրուելով, ժամը 7ին արտաքին գործոց պաշ-
տօնատունը գլխավորեցան, ուր արտաքին գոր-
ծոց վեհմեծ նախարարը՝ Ս. Պատրիարքին և Գա-
ղաքական ժողովը հրաժարած ըլլալ յիշեցնե-
լով՝ առաջարկեց որ անմիջապէս տեղապահի մը
ընտրութիւնն ընեն իւր ներկայութեամբ, որ-
պէսզի գործը շուտ և գիւրութեք վերջանայ:

Հրաւիրեալներէն շատերը խոհական ազգասի-
րութեամբ գիտողութիւն ըրին թէ քանի որ
ազգը Տէրութեան վաւերացեալ օրէնք մ'ունի
ձեռքը, լաւ կը լլայ այն օրինաց համեմատ կա-
տարել տեղապահի ընտրութիւնը: Հետեւաբար
խնդրեցին որ այս գործն ազգին օրինաց համե-
մատ կատարուելու հրաման չորհուի:

Վսեմա. նախարարը հաճելով այս առաջար-
կութեան, որոշեց հրաման գրել կրօնական ժո-
ղովը գերաւ ատենապետին, որ երեսփոխանա-
կան ժողովը հրաւիրէ նոր Գաղաքական ժողով
մ'ընտրելու համար, որպէսզի քաղաքական և
կրօնական ժողովները միանալով տեղապահի
ընտրութիւնն անյապաղ կատարեն ըստ Սահմա-
նագրութեան:

Հրամանագիրն այսօր կամ վաղը կը ստանա
Ահաւասիկ Բարձրագոյն Դուպար հրաւիրեալ
անձանց անունները:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

- Գերաւ. Թադէոս եպիսկոպոս
- » Ներսէս »
- » Խորէն »
- » Նիկողոս »

ԱՇԽԱՏԱՅԻՆՔ

- Վսեմա. Աբրահամ պէյ Երսմեան
- » Սարգիս » Պալեան
- » Յարութիւն Էֆ. Տատեան
- » Գրիգոր » Օտեան
- » Սարգիս » Աղաբէկեան
- » Գ. Վահան » Վահանեան
- » Գէորգ » Փափազեան
- » Սիմօն » Մաքսուտեան
- » Յակոբ » Նորասուկեան
- » Աւաքի » Տատեան
- » Սէրգիէն »
- » Ստեփան փաշա
- » Մ. Մանուկ » Մանուկեան
- » Յովհաննէս » Սուրենեան:

ՊԱՐԵՆՈՒՆ ԳԵՐԱԿԱՐՏ

Աղեքսանդր Տիմալի այս պատուական վեպին եր-
րորդ եւ չորրորդ հատորներն եւս՝ շարգմանութեամբ
Մ. Մամուրեան պատուելիին ի լոյս ընծայեցան ի
սպագրատան Տեսեանց:

Ամբողջ գործը 42 հատորի պիտի բաղկանայ:
Քաղաքին համար բաժանորդութիւն 440 դուրու:
Վեց հատորը տպուելէ ետեւ 420 »
Խաբարացիք հատորը կարծե 42 »

ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԻՒՆ

Ի նպաստ հիւանդանոցի Հայոց Զմիւռնիոյ
Թիւ տոմարաց 42,000
Գին իւրաքանչիւրին հինգ Ֆրանք:
Շանոյ քիւրքեր երեք եւ, այսինքն՝

Առաջին՝ պիտի շահի մեծ նոր տուն մի՝ ի Փոնթա
փողոցը թիւ 55, որոյ լայնութիւնն 16 ու երկայնութիւնն
80 կանգուն է, 14 սենեկօք, աղբիւրով ու պարտէզով,
և կարծէ 2000 լուիս:

Երկրորդ՝ պիտի շահի պղտիկ Բուսմանի մի շորս սե-
նեկօք ի Բէշտամալը պաշտ:

Երրորդ՝ խանութ մի ի Կիւրիտ խան:

Ս. Սինոդի հաւանութիւնը պիտի քաղուի անհրաժեշտ
տար 1874 Յուլիս 1—13ին ի հիւանդանոցն Հայոց:
Ս. մեն տոմարի՝ որ հիւանդանոցի վարչութեան կիւրք
չկրի, անվաւեր է:

Մեծ տունը շահողը պիտի շնորհէ հիւանդանոցին
Հայոց լուիս 420
Բուսմանին շահողը 20
Խանութը շահողը 40

Տոմարները կը վաճառուին ի հիւանդանոցն Հայոց,
ինչպէս նաև ուրիշ գանազան տեղեր:

Իւլիս, 1 Նոյեմբեր 1873:

Սինոդի է մեզ յուսով թէ մեր համագոր բարեկալ
անձինք քաղաքիս, ինչպէս նաև դաւառական Հայք
յոթարմատ պիտի փութան գործակից լինել ի նպաստ
Իւլիսի ազգային հիւանդանոցին և զամ այս վիճակահա-
նութեանն. որ կրնայ իրենց ևս օգտակար լինել, եթէ
բողոք յաջողէ:

ՅԱՆՈՒՄ

ՅԱՆԱԳՍ ՊԱՌԻՆ ԵՒ ԺՈՂՈՎՈՅ ՆՈՐԱ
ԵՒ ՅԱՆԵԼՈՒՄԸ

Ի տպարանի սրբոյ կաթողիկէ Էջմիածնի
ի վաղարշապատ 1873:

Գերաւ. Սյւլաքեան Գարբիէ սրբազան արքեպիս-
կոպոսին քարգմանութեամբ Ս. Էջմիածնի տպարա-
նէն ի լոյս ընծայեալ այս պատուական գիրքն ամեն
բանասիրաց խորին ուղարդութեան արժանի է:

Հաւանականաբար գերմանացի հմուտ աստուած-
աբանի մը գրեմ էլա՞ծ ստեղծական անուամբ՝ գրեթե
քրիստոնէական հաւատոյ ամեն մասանց գեղծմանց
վրայ իմաստութեամբ կը խօսի, եւ մասնաւորապէս
պապական եկեղեցւոյն հետեւեալ ընդունած սխալ
վարդապետութիւնները մեկիկ մեկիկ կը ճշմանակի:
Յանոսը վերջին պապական ժողովին յառաջ գրեալ
սակայն ժողովին ընդունելիք հրեաթիկոսական վար-
դապետութիւնը ժամանակին ճշմանակէն գոռակելով
կը խայտառակէ: Եկեղեցական իրաց եւ անցից խորին
հմտութիւն, առողջ եւ անաչառ դիտողութիւն կերեւի
այս ընտիր գրքին մէջ:

Իսկ հայր կերեի առ Պիոս Թ. Վատիկանեան ժո-
ղովոյն եւ իւր կոնդակին դեմ գրած հոգեկանոր բողո-
քոյն քարգմանութիւնը՝ սոյն գրքին յանդիման է եւ
կարծե որ ամեն մարդ կարդայ: Քարգմանութեան
գեղեցկութիւնը գիրքին արժեքը աւելցուցած է:

Գինն է ամենայն տեղ 56 դուրու:

Նաեւ՝ սուրբ Էջմիածնի մամիկն հրատարակուած
են հետեւեալ պատուական գիրքերն:

ԶԱՅՆ ԲԱՉՄԱՅ. գին 19 դուրու:

ԱԶԳԱՅԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ. Մինաս վարդապետի
Համբեւոյ, գին 10 դուրու:

ԲԵՆԻԱՄԻՆ ՅԻՄԱԿԼԻՆԻ ԿԵՆԵԹ. Դործ Զերդի-
նանց Շմիդի. քարգմանութիւն ի գերմաներէ՝ Փ.
Վարդանեան: Գին 7 դուրու:

ՍԻՄԵՈՆ վարդապետի Ապարանցոյ սակա Պան-
լաուսեանց գրքն է Մամիկոնեանց սեռին: Գին
10 դուրու:

ՈՒՍԵՄԵՆՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ. Հատուած առաջին.
Պատմութիւն Հայոց: Գին 25 դուրու:

ԱՐԲԱԶԱՍ ԿԱՌՈՎԻՆՈՍԻ ԿՐԵՏԱՅԻՆՈՑ պատմա-
գրութիւն անցից իւրոց եւ Նաւոր Շանին Պարսից:
Գին 20 դուրու:

ԶԱՔԱՐԻԱ ՍԱՐԿԱՆԱՅԻ Պատմագրութիւն: Գին
37 դուրու:

Է ՏՊԵՐԱԼԵ ԱՇԽԱՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ